

### Տ. ՀԱԿՈԲ ՔԱՀԱՆԱ ՀԱԿՈԲՅԱՆ
(ավազանի անունը՝ Հակոբ)

Ծնվել է 1979 թ. հունվարի 30-ին Էջմիածին քաղաքում:

1985-1995 թթ. սովորել է տեղի թիվ 7 միջնակարգ դպրոցում:

1995-2001 թթ. ուսանել է Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

2001 թ. դեկտեմբերի 25-ին՝Ս. Ստեփաննոս նախավկայի տոնին, ձեռամբ Տ. Միքայել եպիսկոպոս Աջապահյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2001 թ. հուլիսի 1-ին Վեհափառ Հայրապետի բարձր կնօրհնությամբ աշխատանքի է նշանակվել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Մկրտարանում:

2002 թ. հուլիսի 10-ին պաշտպանել է ավարտաճառ՝ «Հայ Եկեղեցին և ԺՁ-ԺԷ դարերի հայ ազատագրական շարժումները» թեմայով:

Նույն թվականից ծառայության է անցել ՀՀ Զինված ուժերում որպես հոգևոր սպասավոր:

2003 թ. նոյեմբերի 23-ին, ձեռամբ Տ. Դավիթ արքեպիսկոպոս Սահակյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա:

Ամուսնացած է, ունի արու զավակ: